

ՀԱԼԵՊ՝ ԱՌԱՋԻՆ ԿԱՅԱՐԱՆ

Posted on February 27, 2013 by Keghart



Category: [Opinions](#)



Մանկութիւն Ունեցող Տղու Մը Յուշերը

Հեղինակի Խօսք՝

Համանուն հատորէն

Չաւէն Խանճեան, Լոս Անճելըս, Փետրուար 2013

Այսօր, Սուրիական հայրենիքը արիւնաթաթախ է:

Այսօր, Սուրիոյ արդի պատմութեան մէջ չտեսնուած տարողութեամբ քանդումի եւ կործանումի ծրագրուած դաւադրութեան մը իրագործումին ականատեսներն ենք մենք:

Այսօր, Սուրիոյ հիւրընկալ բոլոր սահմաններէն լկտի եւ բացայայտ յանդգնութեամբ ներս տեղացող զէնն ու նիւթը, քար ու քանդ կ'ընեն երկիրը:

Մանկութիւն Ունեցող Տղու Մը Յուշերը

Հեղինակի Խօսք՝

Համանուն հատորէն

Չաւէն Խանճեան, Լոս Անճելըս, Փետրուար 2013

Այսօր, Սուրիական հայրենիքը արիւնաթաթախ է:

Այսօր, Սուրիոյ արդի պատմութեան մէջ չտեսնուած տարողութեամբ քանդումի եւ կործանումի ծրագրուած դաւադրութեան մը իրագործումին ականատեսներն ենք մենք:

Այսօր, Սուրիոյ հիւրընկալ բոլոր սահմաններէն լկտի եւ բացայայտ յանդգնութեամբ ներս տեղացող զէնն ու նիւթը, քար ու քանդ կ'ընեն երկիրը:

Այսօր, յղփացած աշխարհակալներ իրենց արիւնարբու անյագ ծրագիրներուն դիմաց թումբ կանգնող արգելքները խստօրէն պատժելու հեշտանքը կ'ապրին:

Այսօր, սադրանքի եւ նենգութեան դպիրները նոխագ մը զոհած ըլլալու պատարագ կը մատուցանեն:

Այսօր, անկախութեան եւ ազատութեան խաբկանքը ապրող օտարին ենթակայ իշխաններ, իրենց կամայապաշտ տերերուն հրահանգները, հլու հնազանդ կը կատարեն:

Այսօր, գերիշխանութեան ցնորքը ապրող, մսխումի եւ շռայլութեան ծովի մէջ լողացող մանր իշխանաւորներ կայսերական քղամիդներու յարատեւ փնտռտուքի մէջ են:

Այսօր, ցեղասպանութեամբ կողոպտուած հողատարածքներով գերիշխանութեան գոյութիւն բարբառող եւ զերթ պոռնիկ զանոնք ծախու հանող կաւատներ գալիք

վարձատրութիւններու գինարբուքը կ'ապրին:

Ու ես կու լամ ի տես այս վիճակին:

Ու ես կու լամ հոն ապրող հերոս ժողովուրդին համար:

Ու ես կու լամ ի տես հոն ապրող դարամեայ մեր գաղութին համար:

Դար մը հայրենական կարօտի կրակով ճարճատող եւ ջերմացող գաղութին համար:

Դար մը կենսունակ, ստեղծագործ, հայութիւն շնչող, պահպանող եւ արտածող գաղութին համար:

Դար մը վերադարձի յոյսն ու հաւատքը ապրող եւ պահող գաղութին համար:

Որու տառապանքի մշուշապատ երկինքին վրայ այսօր ոմանք, ի՛նչ հեգնանք, տուար կը տեսնեն:

Որու ցաւատանջ ողբերգութեան մէջ ոմանք, ի՛նչ ափսոսանք, շահի աղբիւր կը փնտռեն:

Ու տակաւին ուրիշներ ի տես վտանգին... կը նիրհեն հանգիստ:

Մենք կուրցած ենք կատարուած ցեղասպանութեան մը ճանաչման հետապնդումով ու չենք տեսներ սպառնացող նորանոր վտանգները Սփիւռքահայ մայր գաղութի գլխուն:

Գաղութը զոր մենք քեցինք. մենք՝ տկարներ, արկածախնդիրներ, փախստականներ, պանդուխտներ, բախտ որոնողներ եւ ինչու չէ՝ հեշտասերներ:

Գուցէ՛ արդարացուցիչ էր: Գուցէ՛ ոչ:

Բայց զանգուած մը հսկայ, գիտակից որոշումով, մտածումով եւ ծրագրումով վճռեց մնալ պատնէշի վրայ՝

Վճռեց մնալ սահմանի վրայ:

Սուրիական պատնէշի վրայ:

Հալեպեան պատնէշի վրայ:

Սահմանամերձ գաղութը կարելի՞ է զոհել, քել

Հայրենամերձ գաղութին կարելի՞ է դաւաճանել

Եւ ես կու լամ ճառուկեանով մկրտուած «Երագային Հալեպի»ն համար:

Հոն՝ ուր երազներ ծնան

Հոն՝ ուր երազներ հիւսուեցան

Հոն՝ ուր երազներ ապրուեցան

Հոն՝ ուր Նոր երազներ կը ծնին տակաւին ամէն օր
Հոն՝ ուր գանձեր ունինք ապրող
Պատնէշի վրայ կանգնած գանձեր
Կենսունակ եւ կայտառ գանձեր
Փայլուն եւ պսպղացող գանձեր
Ամրակուռ, անգին, անեղծ
Հոն՝ ուր գանձեր ունինք թաղուած
Հօրս՝ Մոալլեմ Ուասքէններու նման գանձեր
Պիտի թողո՞ւնք որ Նոր Ձուղայի ճակատագիրը հետեւի անոնց
Սփիւռքահայ Մայր Գաղութի դարադարձը կը մօտենայ
Դարադարձը պիտի մարե՞ր երազներու այդ աշխարհը
Դարադարձը պիտի թաղե՞ր երազներու այդ աշխարհը
Ո՛Չ ԵՐԲԷՔ
ՔԱԻ ԼԻՑԻ
Դուք գիտե՞ք քանի տարեկան է Սուրիան
Դուք գիտե՞ք քանի դարեկան է քաղաքակրթութեան այդ օրրանը
Սուրիան կրակի շապիկով կնքուած է
Սուրիան կրանիթեայ կամքով զրահաւորուած է
Եւ Սուրիահայ մայր գաղութը Նոյնպէս
Քօղերը պիտ՛ պատռուին
Առասպելները պիտ՛ մերկանան
Ճշմարտութեան արեւը պիտ՛ ծագի
Բերդը կը պահուի
Բերդը կը պահեն
Բերդը պիտ՛ պահեն
Կանգուն, ամրակուր, գուցէ վիրաւոր բայց կենդանի
Փա՛ռք այդ արի ժողովուրդին:



